«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի,
գնդապետների ժամանակավոր
կատարող, ոստիկանության գնդապետ
_____ Գ. Մալխասյան
«___» _____ 2022 թ.

ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի՝ Անահիտ Գառնիկի Այվազյանի՝ «Իրավունքի սուբյեկտի էությունը և ժամանակակից մոտեցումները. տեսական-իրավական վերլուծություն» թեմայով ԺԲ.00.01 «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնը, մասնակցությամբ՝ իրավաբանական գիտությունների թեկնածու Ռ. Ռ. Մարանդյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Գ. Մ. Խուդոյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա. Ա. Հարությունյանի, Ա. Գ. Սաֆարյանի և Ա. Ս. Մարգարյանի, քննարկեց Անահիտ Գառնիկի Այվազյանի՝ «Իրավունքի սուբյեկտի էությունը և ժամանակակից մոտեցումները. տեսական-իրավական վերլուծություն» թեմայով ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսումունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը և հանգեց հետևյալին:

Ժամանակակից հայ հասարակության ներքին բարեփոխման գործընթացները իրավական պետության կայացման, քաղաքացիական հասարակության բնականոն զարգացման նպատակներով պայմանավորում են իրավունքի սուբյեկտի խնդրի հետազոտության արդիականությունը: Բացի այդ, աշխարհում իրավական գլոբալացման գործընթացներով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջանում

ձևավորելու նոր իրավական ընկալում: Ընդ որում, նման ընկալման առանցքը հանդիսանում է անձնակենտրոն իրավական համակարգի գաղափարը: Կարևորելով իրավունքի սուբյեկտի տեղն ու դերը իրավակարգավորումների կառուցակարգում, հեղինակը սույն աշխատանքի շրջանակներում փորձել է իրականացնել համալիր գիտագործնական հետազոտություն՝ ուղղված իրավունքի սուբյեկտների կոմունիկացիոն համակարգի, իրավական կոմունիկացիայի և իրավական կարգավորման հարաբերակցության, իրավասուբյեկտության երկու փուլերի՝ իրավունակության և գործունակության հիմնախնդիրներին:

Թեկնածուական ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, տասներեք ենթագլուխ պարունակող երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի այսպիսի կառուցվածքը, ընդհանուր առմամբ, համահունչ է այն խնդիրներին ու նպատակներին, որոնք իր առջև դրել է հեղինակը:

Աշխատանքի ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում թեմայի հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, գիտական-տեղեկատվական, տեսական և մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, ինչպես նաև՝ պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, արդյունքների փորձաքննությունը և աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Իրավունքի սուբյեկտի հասկացության հիմնախնդիրը իրավունքի տեսության տեսանկյունից» վերտառությամբ գլխում հեղինակը բացահայտել է իրավունքի սուբյեկտի ընդհանուր հասկացությունը, ներկայացրել հիմնական հատկանիշները, անդրադարձել է իրավունքի սուբյեկտի ընկալմանը բնական և պոզիտիվ իրավունքի տեսանկյունից, ինչպես նաև իրավունքի սուբյեկտի՝ որպես իրավական կատեգորիայի և իրավական մշակույթի պատմական զարգացման հիմնական ուղենիշներին:

Աշխատանքի երկրորդ գլխում, որը կրում է «Իրավունքի սուբյեկտի հասկացութային առումների բազմազանությունը» խորագիրը, լուսաբանված են իրավունքի սուբյեկտի ընկալման բազմազանությունը, բովանդակային առանձնահատկությունները և բնութագրական հատկանիշները: Միաժամանակ, հեղինակը իրականացրել է քննարկվող հիմնախնդրի վերլուծություն՝ անդրադառնալով իրավունքի սուբյեկտին ոչ միայն մարդաբանական տեսանկյունից, այլև ֆորմալ-իրավաբանական, թերապևտիկ և ժամանակակից հայեցակարգերի համատեքստում:

«Իրավասուբյեկտության հասկացությունը և բովանդակային բաղադրիչները» խորագրով երրորդ գլխում հեղինակն ներկայացրել է իրավասուբյեկտության բովանդակային կառուցվածքը և յուրաքանչյուր բաղադրիչի առանձնահատկությունները, նաև քննարկել է իրավունակության՝ որպես իրավասուբյեկտության առաջնային և գործունակության՝ լիարժեք իրավասուբյեկտության՝ նշանակությունը իրավունքի սուբյեկտի ձևավորման գործընթացում:

Ատենախոսության եզրափակիչ մասում շարադրված են հետազոտության կատարման արդյունքում հեղինակի կողմից արված եզրահանգումները:

Գիտական հետազոտության վերաբերյալ ընդհանուր դրական կարծիքի հետ մեկտեղ հարկ ենք համարում ներկայացնել հետևյալ նկատառումները՝

1. Հստակության տեսանկյունից վիճահարույց է պաշտպանության ներկայացվող երկրորդ դրույթը: Անհրաժեշտ է նշել, որ իրավունքի սուբյեկտի՝ իրավունքի համակարգի առաջնային համակարգաստեղծ տարր հանդիսանալու վերաբերյալ առաջարկող դրույթը, լրացուցիչ հիմնավորման կարիք ունի: Այն պայմանավորված է իրավունքի համակարգում իրավական նորմի դերի և իրավունքի սուբյեկտների միջև հարաբերությունների կարգավորման առաջնահերթության դիտարկմամբ:

2. Գիտական նորույթի տեսանկյունից վիճահարույց է պաշտպանության ներկայացվող ութերորդ դրույթը: Վերջինիս շրջանակներում Հեղինակը ուշադրություն է հրավիրում իրավունակության տարրերի վրա՝ առանձնացնելով ոչ թե իրավունքները կամ պարտականությունները, այլ իրավունքում անձի իրավունքներ և պարտականություններ կրողին, իրավահարաբերությունների սուբյեկտին, իրավագիտակցության սուբյեկտին: Հարկ է նկատել, որ ներպետական իրավական համակարգի շրջանակներում իրավունակությունը արդեն իսկ սահմանված է որպես իրավունքի սուբյեկտի անօտարելի հատկություն: Չթերագնահատելով ատենախոսի կողմից իրականացված հետազոտության արժեքը, այնուամենայնիվ, կարծում ենք, որ վերոհիշյալ մոտեցումը չի պարունակում գիտական նորույթի էական տարրեր:

3. Թերի է ատենախոսության գրականության ցանկի ձևավորումը: Մասնավորապես, ատենախոսության՝ «Մասնագիտական գրականություն» բաժնում ներառված ոչ բոլոր աղբյուրների դեպքում են նշված դրանց էջերի ընդհանուր քանակի վերաբերյալ տվյալները: Բացակայում են էլեկտրոնային ռեսուրսի օգտագործման վերաբերյալ պատշաճ գրառումները:

Ներկայացված նկատառումները կրում են մասնավոր բնույթ և չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը, պայմանավորված են աշխատանքն առավել որակյալ տեսնելու ցանկությամբ:

Հետևություն. «Իրավունքի սուբյեկտի էությունը և ժամանակակից մոտեցումները. տեսական-իրավական վերլուծություն» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, որը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը՝ Անահիտ Գառնիկի Այվազյանը, արժանի է իր կողմից հայցվող իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ ԺԲ.00.01-«Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսումունքների պատմություն» մասնագիտությամբ:

Առաջատար կազմակերպության կարծիքը Անահիտ Գառնիկի Այվազյանի՝ «Իրավունքի սուբյեկտի էությունը և ժամանակակից մոտեցումները. տեսական-իրավական վերլուծություն» խորագրով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ պատրաստվել է Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետության և իրավունքի տեսության և սահմանադրական

իրավունքի ամբիոնի պետի պարտականությունների ժամանակավոր կատարող, ոստիկանության փոխգնդապետ Ա. Գ. Սաֆարյանի կողմից:

Քննարկվել և հավանության է արժանացել պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի 2022 թ. մայիսի 19 նիստում, արձանագրություն թիվ 14 :

Ամբիոնի պետի պարտականությունների ժամանակավոր կատարող, ոստիկանության փոխգնդապետ _____ Ա. Գ. Սաֆարյան

Ա. Գ. Սաֆարյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի տեղակալ, ինքը և կադրերի և ԱՀՏԱ բաժնի պետ, ոստիկանության գնդապետ _____ Գ. Գ. Մալխասյան